ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 7, 1962 Общественные науки

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Ս. Ա. Մելքոնյան

ՊԱՅՄԱՆԻ ՊԱՐԱԳԱ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Հայտնի լեզվաբան Ստ. Պալասանյանը, որ հայ քերականագիտության մեջ առաջինն է քննել երկրորդական նախադասությունների կապակցությունը իր «Գործնական քերականություն հայերեն լեզվի» աշխատության մեջ, պայմանի պարագա երկրորդական նախադասությունները չի դիտել իբրև առանձին բնույթի նախադասություններ։ Այլ դիտել է իբրև պատճառական նախադասությունների ենթատեսակ։ Հետագայում սակայն, 1847 թ. լույս տեսած «Քերականություն մայրենի լեզվի» գրքում, նա թեական (ինչպես և տեղատվական) երկրորդական նախադասությունները առանձնացնում է պատճառական նախադասություններից իբրև առանձին տեսակ՝ վերանվանելով պայմանական նախադասություններ։

Հետագա քերականները, սակայն, անտեսեցին այս կարծիքը։ Այսպես Ստ. Մալխասյանը մեզ հետաքրքրող երկրորդական նախադասությունները համարում է պատճառական նախադասությունների տարբերակ։

Պրոֆ. Մ. Արեղյանը միատեսակ վերաբերմունք չունի պարագա երկրորդական նախադասությունների տեսակների ընդունման հարցում։ Մի դեպքում պայմանի, ինչպես և պատճառի, նպատակի, զիջական պարագա երկրորդական նախադասությունները դիտում է իբրև առանձին տիպի նախադասություններ՝, իսկ մեկ այլ դեպքում՝ պարագա երկրորդական նախադասությունների բուն քննության ժամանակ, դրանք միավորում է «հիմունքի խոսքերի» մեջ։

Իհարկե, ինչպես մյուս բնույթի, այնպես էլ պայմանի նախադասությունները իմաստային տեսակետից սովորաբար հանդես չեն գալիս անխառն վիճակով։ Այս բնույթի նախադասություններում հիմնականը լինելով պայմանի հարաբերությունը, դրան զուգահեռ կարող են առկա լինել և այլ երանգներ։ Այս հարցում կարող են որոշակի դեր ունենալ երկրորդական նախադասության մեջ գործածվող որոշ բառեր (մակբայներ, եղանակավորող բառեր), ինչպես ստորոգյալի եղանակն ու ժամանակը։

Պայմանի երկրորդական նախադասությունները գլխավորի հետ կապվում են երբ, երբ միայն, որ, բե որ, միայն թե, մինչև, թե *շաղկապներով և* երբ *հարաբերական բառով։ Գլխավոր նախադասության մեջ կարող են հանդես գալ* այն դեպքում, այն պայմանով, ուրեմն, ապա, *երբեմն էլ* այն ժամանակ *բառերն ու կապակցությունները։*

Պայմանի երկրորդական նախադասություններն ունենում են գերազանցա-

---

1 *Տե՛ս* Մ. Աբեղյան, *Աշխարհաբարի շարահյուսություն, Վաղարշապատ, 1912, էջ 271։*

պես պարզ ստորոգյալ, որը կարող է արտահայտվել բոլոր եղանակներով՝ բացի հրամայականից։ Սակայն, անհամեմատ ավելի շատ են գործածվում ըղձական ու պայմանական եղանակների հատկապես ապառնի ժամանակներով արտահայտված ստորոգյալները, որովհետև պայման դիտվող իրողությունը սովորաբար հանդես է գալիս որպես հնարավոր, ենթադրելի։

Պայմանի պարագա նախադասություններում այս կամ այն եղանակի գործածությունը պայմանավորվում է հատկապես դրանց իմաստային յուրահատկությամբ, ինչպես նաև նրանով, թե խոսողն ինչպիսի վերաբերմունք ունի ենթադրվող պայմանի նկատմամբ, ինչպիսին է պայմանի ու հետևանքի փոխհարաբերությունը։

Երբ անհրաժեշտ է լինում պայմանական դատողությունը մեջ բերել՝ նրանից մի ուրիշ դատողություն, եզրակացություն հետևցնելու համար, սովորաբար օգտագործվում է սահմանական եղանակը։ Օրինակ՝ «Եթե դու ուզում ես ծառայել մի գործի—առաջ ինքդ պարտավոր ես կուրորեն հավատալ այդ գործի ճշմարտությանը։ Եթե դու հույս չունես քո ուժերի վրա — մի դուրս գալ ասպարեզ» (Շ., հ. 2, էջ 385)։

Պայմանական եղանակով արտահայտված ստորոգյալ է օգտագործվում. եթե խոսողը հավատացած է, որ երկրորդական նախադասությամբ արտահայտված մտքի իրականացումը ավելի հնարավոր է, չի կասկածում դրա իրականացման վրա։ Ենթադրականով դրված պայմանը, ինչպես իրավացիորեն նկատում է Մ. Աբեղյանը, ավելի սպասելիության իմաստ է տալիս խոսքին. օրինակ՝ «Եթե դուք կցանկանաք (խոսողը սպասում է, որ կցանկանան), վաղն ևեթ կմեկնենք»։ «Թե ձենը դուրս կգա, ես նրա սերն ու մուրազը նշանց կտամ» (Հ. Թ., հ. 3, էջ 75)։

Երբ պայմանն ու հետևությունը մտածվում են որպես լոկ ցանկալի մի ենթադրություն, որի կատարումը սպասելի չէ, պայմանի երկրորդական նախադասության ստորոգյալը սովորաբար արտահայտվում է ըղձական եղանակով, դրա հատկապես անցյալի ապառնի ժամանակով. «Նա էլ եթե ուսում առներ, կրթվեր, ապահով լիներ, լավ մարդ կլիներ» (Հ. Թ., հ. 3, էջ 120)։ «Զավակ որ ունենայիր, այդքան լացկան չէիր լինի» (Ն. տ., էջ 51)։

Սովորաբար ըղձական եղանակով է արտահայտվում նաև այն պայմանի երկրորդական նախադասության ստորոգյալը, որը ոչ թե մասնավոր, այլ ընդհանուր նշանակություն է ունենում. այդպես է լինում հատկապես առածներում. «Դարնանը որ հնգիաթ պատմեն, կարկուտ կգա» (Ա. Շ., 23)։ «Եթե լեզուն չլինի, ագռավները աչքերը կհանեն» (ՀԺԲ, 469)։

Համեմատաբար լայն կիրառություն ունեն այն պայմանի երկրորդական նախադասությունները, որոնք գլխավոր նախադասության հետ կապվում են եթե շաղկապով։ Այս շաղկապով կապվող երկրորդական նախադասության արտահայտած պայմանն ավելի ընդգծելու և զորեղ դարձնելու համար շաղկապից անմիջապես հետո օգտագործվում է միայն բառը (ոմանք «եթե» և «միայն» բառերը միասին բարդ շաղկապ են համարում)։ Օրինակ՝ «Իսկ եթե ամպից կայծակը ճայթի, մեզ մտարերիր» (ՍՍՄ, էջ 43)։ «Թշնամին նրան վնասել չէր կարող, եթե միայն մատնիչները չդավաճանեին» (ՄԳՄ, 269)։

Իմաստային տեսակետից սրանց բավական մոտ է որ շաղկապով կապվող պայմանի պարագա երկրորդական նախադասությունների կգալի մասը։ Ուստի դրանց քննությունը հիմնականում միասին կկատարենք։

«Եթե» շաղկապով կապվող պայմանի երկրորդական նախադասությունները կարող են ունենալ ժամանակի որոշ երանգ հատկապես այն դեպքում, երբ գլխավոր նախադասության մեջ լինում է այն ժամանակ կապակցությունը։ Սրանով ակնարկվում է ապառնի ժամանակ, որի ընթացքում կատարվելու է պայմանով գործողությունը։ «Եթե Աշոտը կհաջողի հոր դահը պայազատելու, այն ժամանակ ես դարձյալ կփեսայացնեմ նրան» (ՄԳՄ, էջ 40)։ «Իսկ եթե թագավորը ջուր ծախելն էլ արգելի, էն ժամանակ ի՞նչ ես անելու» (Հ. Թ., հ. 3, 181)։ Ճիշտ չի լինի «այն ժամանակ» կապակցությունը նկատի ունենալով, կարծել, թե այսպիսի երկրորդական նախադասությունները ժամանակի պարագա են։ Հեշտությամբ կարելի է այդ կապակցությունը փոխարինել «այն դեպքում» կապակցությամբ, որի գործածությունն այսպիսի նախադասություններում, կարծում ենք, ավելի ճիշտ կլիներ։ Փոփոխությունից հետո բարդ նախադասության բաղադրիչների հարաբերությունն ավելի որոշակի կդառնա։ Դա վկայում է այսպիսի նախադասությունների պայմանի և ո՛չ թե ժամանակի պարագա լինելու հանգամանքը։

Երբ, որ շաղկապներով կարող են կապվել նաև այնպիսի պայմանի երկրորդական նախադասություններ, որոնք ունեն զիջական երանգ։ Այսպիսի երկրորդական նախադասություններում սովորաբար օգտագործվում են հետևյալ բառերը. անգամ, մինչև անգամ, թեկուզ, նույնիսկ, էլ[2] և այլն։ Երկրորդական նախադասության ստորոգյալն արտահայտվում է ըղձական եղանակով։ Գլխավոր նախադասության մեջ կարող են գործածվել դարձյալ, էլի բառերը։ Օրինակ՝ «Եթե այդ էլ չգտնվի, նա շատ գոհ կլինի» (Ռաֆ., հ. 2, էջ 384)։ «Որ չկրակեն էլ, ես կփախչեմ» (Ա. Շ., էջ 324)։

Ինչպես կարելի է նկատել, այսպիսի երկրորդական նախադասությունները ցույց են տալիս այնպիսի պայման, որի կատարման դեպքում առաջ կգա ոչ թե տրամաբանական, սպասելի, այլ հակառակ հետևանք։ Այս իմաստով էլ պայմանն ու զիջականությունը կարծես հավասար ուժով են հանդես գալիս։

Այստեղ պիտի նշել նաև այն նախադասությունների մասին, որոնք վերևում քննարկվածների համեմատությամբ բավական թույլ են օժտված զիջականության երանգով։ Սրանցում սովորաբար չեն գործածվում վերը նշված եղանակավորող բառերը, որով և պայմանավորվում է զիջականության թույլ լինելը։ Նշենք այդպիսի օրինակներ՝ «Բայց մի ձանձրանա, եթե մի քիչ հեռվից սկսեմ» (ՄԳՄ, էջ 34)։ «Եթե մեր տունը գնայի, այնտեղ էլ կարող էին հայտնվել ֆերրաշները» (Ռաֆ., հ. 2, էջ 322)։

Առանձին հետաքրքրություն են ներկայացնում այնպիսի բարդ նախադասությունները, որոնց երկրորդական նախադասությունն արտահայտում է հնարավոր մի իրողություն, իսկ գլխավոր նախադասությունը առանձնացնում, որոշ իմաստով մեկնաբանում է դա։ Այսպիսի երկրորդական նախադասությունները սովորաբար բազմաբարդ նախադասություններում են ավելի շատ հանդես գալիս։ Օրինակ՝ «Ես շատ ցավում եմ, որ այս օրիորդը ձեր ներկայությունն է ընտրել իր լվացքը լվանալու համար՝ և եթե ես նույն կեղտաջուրը չեմ թափում իր

2 Պրոֆ. Մ. Աբեղյանը, այս բառերը «եթե» շաղկապի հետ միասին գիտում է որպես բաղադրյալ շաղկապ (տե՛ս «Աշխարհաբարի շարահյուսություն», էջ 324)։

3 Հմմտ. Մ. Աբեղյան, Աշխարհաբարի շարահյուսություն, էջ 324։

գլխին, դրա համար թող պարտական լինի ձեր ներկայությանը» (ՆԴ., հ. 3, էջ 39)։

Երբ, բե, որ շաղկապներով կապվող պայմանի պարագա երկրորդական նախադասությունները երբեմն այնքան թույլ պայման են արտահայտում, որ գլխավոր նախադասության նկատմամբ ունենում են հակադրական հարաբերության երանգ։ Օրինակ՝ «Ես էլ որ չասեմ, քարերը կրդավեն» (Ն. Դ., հ. 3, էջ 11)։ Դժվար չէ նկատել, որ հակադրական երանգի գոյացման հարցում հատկապես կարևոր նշանակություն ունեն գլխավոր և երկրորդական նախադասությունների ստորոգյալները, որոնք հաճախ հականիշ բառերն են լինում։ Նման երկրորդական նախադասություններին բավական մոտ են այնպիսիները, որոնց արտահայտած իրողությունը գլխավոր նախադասության արտահայտած իրողության հետ համադրվում-հանդիպադրվում է։ Նախորդների համեմատությամբ սրանք ավելի թույլ պայմանի երանգ ունեն։ Օրինակ՝ «Եթե մի կողմից նա շքեղացրել էր արքունիքը ի պատիվ Արարատյան վեհապետի, մյուս կողմից էլ այդ արել էր յուր վեհազնյա հյուրերի առաջ պարծենալու համար» (ՄԳՄ, էջ 417)։ «Եթե երջանկությունը տևողական չէ, ապա վշտերն էլ հավիտենական չեն» (Ն. տ., էջ 59)։

Երբ շաղկապով կապվող պատճառի երանգ ունեցող պայմանի երկրորդական նախադասությունները սովորաբար ստորադասվում են այնպիսի գլխավոր նախադասության, որի ստորոգյալն արտահայտված է լինում հրամայական եղանակի բայով։ Երկրորդական նախադասությամբ արտահայտված որոշ պատճառը խոսողի կողմից դիտվում է ոչ թե ստույգ, այլ ենթադրական, պայմանական։ Մյուս պայմանի երկրորդական նախադասություններից տարբերելու համար պիտի նկատի ունենալ, որ սրանք երբ շաղկապի փոխարեն կարող են կապվել պատճառի հարաբերություն արտահայտող որովհետև շաղկապով, որի դեպքում երկրորդական նախադասությամբ արտահայտված պատճառը խոսողի կողմից դիտվում է որպես ստույգ, իրական իրողություն։ Օրինակներ «Դե մնա, եթե չես կարող բաժանվել նրանից» (Հ. Թ., հ. 3, էջ 272)։ «Խոսիր, եթե դեռ մի ուրիշ ցավ ունես» (ՄԳՄ, էջ 291)։ «Եթե դու հույս չունես քո ուժերի վրա—մի դուրս գա ասպարեզ» (Շիր., հ. 2, էջ 285)։

Առանձին պիտի նշել երբ շաղկապով կապվող այնպիսի պայմանի երկրորդական նախադասությունների մասին, որոնք ունեն ցանկալիության երանգ։ Դրանց ստորոգյալն արտահայտվում է ըղձական եղանակի բայով։ Օրինակ՝ «Եթե ոսկի ունենայի, կտայի վանքին» (ԽԴԽ, էջ 206)։ «Իսկ եթե հաղթեմ, ի՞նչ կխոստանաս ինձ» (Ն. տ., էջ 103)։ Ցանկալիության երանգ ունեցող նման նախադասությունները կարող են գործածվել որպես պարզ, անկախ նախադասություն։ Այդպիսի դեպքում դրանք հանդես կգան որպես շարահյուսորեն ոչ լրիվ միավոր, ենթադրելի է մնում գլխավոր նախադասությունը, որի բովանդակությունն այս կամ այն չափով կենթադրվի համապատասխան կոնտեքստում։ Օրինակ՝ «Եթե զորք ունենայինք, եթե իշխաններից գոնե մի երկուսը միանային...» (ՄԳՄ, էջ 266)։

Իմաստային տեսակետից երբ շաղկապով կապվող պայմանի երկրորդական նախադասություններին բավական մոտ են բե շաղկապով կապվող պայմանի երկրորդական նախադասությունները։ Դրանց հիմնական տարբերությունն այն է, որ բե շաղկապով կապվող պայմանի երկրորդական նախադասությունները համեմատարար ավելի անհաստատ, անստույգ իրողություն են արտա-

հայտում, սրանցով արտահայտված պայմանն առնվում է թեական իմաստով։ Մեր կարծիքով, իմաստային այդ յուրահատկությունն այնքան է շեշտված այդպիսի նախադասություններում, որ դրանցում բացառվում է այլ երանգների առկայությունը։ Նշենք մի քանի օրինակներ. «Թե վախենում ես, մի գնա» (Բաֆ., հ. 8, էջ 206)։ «Տար, թե կարող ես» (ԱՇ., 397)։ «Էս թե անասուն է, ինչո՞ւ չի երևում» (Հ. Թ., հ. 3, էջ 75)։ Սակայն որոշ դեպքերում այսպիսի երկրորդական նախադասությունները արտահայտում են ոչ թե թեական, այլ բավական հաստատ իրողություն, հանգամանք, բայց այն յուրահատկությամբ, որ ոչ թե անմիջականորեն, այլ հակադարձ ըմբռնումով։ Այդ պարզ զգացվում է հետևյալ օրինակներում. «Երևալու ցանկություն թե ունենայի, ժամանակ միշտ կարող էի վաստակել» (Մուր., հ. 5, էջ 351)։ «Թե սխտորի քաղցրը գտնվի, թագավորի էլ բարին կգտնվի» (ԱՇ., էջ 140)։

Վերևում քննարկված նախադասություններին ձևով բավական նման են երբ, բեր շաղկապներ ունեցող այսպիսի նախադասությունները. «Ոչ մի զինվոր, երբ իրոք նա զինվոր է, չպետք է սպասի ընկերներին, երբ հայրենիքը վտանգի մեջ է գտնվում» (ՄԳՄ, էջ 270)։ «Մնում է, որ ես ինքս գործեմ այդ հանցանքը, երբ արդարև դա մի հանցանք է» (Ն. տ., էջ 251)։

Ընդգծված նախադասությունները չպիտի շփոթել պայմանի պարագա նախադասությունների հետ։ Սրանք չեն արտահայտում երկրորդական նախադասությանը հատուկ հարաբերություն։ Սրանց միջոցով արտահայտվում է խոսողի վերաբերմունքը հիմնական նախադասությամբ արտահայտված իրողության կամ նրա որևէ անդամի բովանդակության նկատմամբ։ Սրանք միջանկյալ նախադասություններ են։ Ճիշտ է, այսպիսի դեպքերում երբ, բեր շաղկապները միջանկյալ նախադասությունները միացնում են հիմնական նախադասության հետ, սակայն այդ կապը բավական թույլ է, դրա բնույթը որոշակիորեն տարբեր է գլխավոր և երկրորդական նախադասությունների ունեցած հարաբերության բնույթից։

Իմաստային տեսակետից երբ և բեր շաղկապներով կապվող պայմանի երկրորդական նախադասությունների համեմատությամբ միջին դիրք են գրավում բեր որ բաղադրյալ շաղկապով կապվող նախադասությունները, որոնք ոչ այնքան հաստատական իմաստ ունեն, որքան առաջինները և ոչ էլ այնքան թեական, որքան երկրորդները։ Պիտի նշել նաև, որ սրանք ավելի հարազատ են հատկապես ժողովրդական բանավոր խոսքին։ Օրինակ՝ «Քո հերն ու մերը թե որ ինձ չտան, արին կթափեմ հս գետի նման» (Հ. Թ., հ. 2, էջ 50)։ «Բան է, թե որ չտան սիրով, աչքը հանիր՝ խլիր զոռով» (Ն. տ., էջ 123)։ «Թե որ կուզես, մեր տղաներից էլ մի երկու ձիավոր թող գան գյուղի տակին թաք կենան, թե որ բան է, մի փորձանք պատահելիս լինի, օգնության հասնեն» (Ղ. Ա., Ը, էջ 585)։

Պայմանի երկրորդական նախադասությունները գլխավորի հետ կարող են կապվել նաև երբ հարաբերական բառով։ Պրոֆ. Մ. Աբեղյանը երբ հարաբերականով կապվող երկրորդական նախադասությունները անվերապահորեն համարել է ժամանակի պարագա երկրորդական նախադասություններ։ Համեմատենք այսպիսի օրինակներ. «Երբ հրապարակ էի գնում, հանդիպեցի ընկերոջդ»։ «Երբ դուք այդպես եք վարվում, մենք էլ մեր ցանկացածը կանենք»։ Իսկապես, առաջին օրինակում երբ հարաբերականով կապվող երկրորդական նախադասությունը ցույց է տալիս գլխավոր նախադասությամբ արտահայտված իրողության

ժամանակը (և՞րբ է հանդիպել ընկերոջը—հրապարակ դնալիս)։ Դա ժամանակի պարագա երկրորդական նախադասություն է։ Սակայն այդպիսին չէ երկրորդ օրինակում եղած երբ հարաբերականով կապվող երկրորդական նախադասությունը։ Դա ցույց է տալիս գլխավոր նախադասությամբ արտահայտված իրողության ոչ թե ժամանակը, այլ որպես պայման նշված այն հանգամանքը, որի դեպքում որպես հետևանք կկատարվի գերադաս նախադասությամբ արտահայտված եղելությունը։ Հետևաբար դա ոչ թե ժամանակի, այլ պայմանի պարագա երկրորդական նախադասություն է։ Այսպիսի դեպքում երբ հարաբերական բառին գլխավոր նախադասության մեջ կարող են համապատասխանել «այն դեպքում», «ուրեմն»։ Օրինակ՝ «Ցեղապետի դեմքը շողաց այնպես, ինչպես դա լինում է այն դեպքում, երբ մարդուս այցի է գալիս ամենասիրելի բարեկամը» (Վ. Ա., էջ 96)։ «Աշոտ Սմբատյանը չի կարող փրկել նրան, երբ Աշոտ Շապուհյանը այդ չի կամենում» (ՄԳՄ, էջ 347)։

Այսպիսի նախադասություններում երբ բառի հետ կարող է հանդես գալ որ շաղկապը. «Ախր երբ որ պատժողդ ու ազատողդ քո թշնամին է, էլ ինչ կարող ես անել» (Ղ. Ա., Ըն, էջ 620)։

Կան երբ հարաբերականով կապվող այնպիսի երկրորդական նախադասություններ, որոնք գրեթե հավասարապես կարող են դիտակցվել և՛ որպես ժամանակի, և՛ որպես պայմանի պարագա։ Օրինակ՝ «Երբ շատ ես սիրում (շատ սիրելիս, շատ սիրելու դեպքում), հոգիդ շարունակ պատրանքն է գերում» (ՍՍՄ, էջ 57)։ «Երբ այդպիսի կասկած ունեիք նրա վրա, ինչու չէիք հեռացնում ձեզանից» (Բաֆ., հ. 2, էջ 306)։ Այսպիսի երկրորդական նախադասությունների իմաստային յուրահատկությունը ճիշտ հասկանալու, բնույթը ճիշտ որոշելու համար նկատի պիտի ունենալ համապատասխան կոնտեքստը. դա կարող է մասամբ հեշտացնել աշխատանքը։

Չի կարելի ընդունել նաև այնպիսի պայմանի պարագա երկրորդական նախադասությունների գոյությունը, որոնք գլխավորի հետ կապվում են մինչև շաղկապով։ Մ. Արեղյանը սրանք ևս դասում է ժամանակի պարագա երկրորդական նախադասությունների մեջ։ Այսպես, օրինակ, իսկապես ժամանակի պարագա երկրորդական նախադասություններ ունեցող բարդ նախադասությունների թվում նա նշում է նաև այսպիսիները. «Մինչև չգա ետինը, չի հիշվի առաջինը»։ «Չեմ տա, մինչև չասեք, թե...» և այլն (տե՛ս նրա «Աշխ. շարահ., էջ 309)։ Սակայն մի թե «Մինչև չգա ետինը» ստորադաս նախադասությունը ցույց է տալիս «Չի հիշվի առաջինը» գերադաս նախադասության գործողության սոսկ ժամանակը։ Կարծում ենք՝ ոչ։ Այս և նման երկրորդական նախադասություններն արտահայտում են պայման, որի կատարման, առկայության դեպքում կարող է կատարվել այն, ինչ արտահայտվում է գլխավոր նախադասությամբ. ետինի գալը պայման է, որի կատարման դեպքում կհիշվի (կամ կարող է հիշվել) առաջինը։ Առանձին կարևորություն է ներկայացնում առաջինի ոչ թե երբ, այլ որ դեպքում հիշվելու հանգամանքը։ Նշենք այլ օրինակ ևս. «Մինչև երեխան լաց չլինի, մերը ծիծ չի տա» (ՀԺԲ, էջ 471)։ «Մինչև գարուն չգա, ծառը չի ծաղկում» (Ն. տ., էջ 470)։ «Իրենցն ասում են ու քեզ չեն լսում, մինչև չտեսնես մեծին, պիսերին...» (Հ. Թ.)։ Կան այնպիսի բարդ նախադասություններ, որոնցում թեև դրացվում է պայմանի պարագա երկրորդական նախադասության իմաստը, բայց այն առկա չէ, եթե կարելի է ասել՝ դեղչված է։ Առկա է միայն գլխավոր նախադասությունը, որը թե չէ, ապա թե ոչ շաղկապներով կապված է

մեկ այլ համադաս նախադասության հետ։ Հենց այդ շաղկապներն էլ իրենց մեջ մի տեսակ բովանդակում են բացակա (ղեղչված) պայմանի պարագա երկրորդական նախադասության իմաստը։ Օրինակ՝ «Հենվիր ասպանդակին, թե չէ (եթե չհենվես) կընկնես» (ԱԽՀ, էջ 178)։ «Դա պիտի տղա դառնամ, թե չէ բոլորս ձեռքից դնում ենք» (Ա. Շ., էջ 34)։

Ինչպես կարելի է նկատել, վերականգնված պայմանի պարագա երկրորդական նախադասությունը իրենից առաջ դնվող նախադասության կրկնությունն է։ Հիմնական տարբերությունն այն է, որ առաջին նախադասության ստորոգյալը, եթե արտահայտված է լինում հաստատական խոնարհման բայով, դառնում է ժխտական և հակառակը։ Ուստի պայմանի երկրորդական նախադասությունը գեղչվում է խոսքի սեղմության և կրկնությունից խուսափելու համար։ Այս դիտողությունները վերաբերում են նաև այնպիսի բարդ նախադասությունների, որոնց բաղադրիչները կապվում են հակառակ դեպքում (պարագայում), այլապես բառերով։ «Դու շատ պիտի աշխատես, այլապես (հակառակ դեպքում) ետ կմնաս առաջավորներից»։

Այսպիսով՝ պայմանի պարագա երկրորդական նախադասությունների քննությունը ցույց է տալիս, որ դրանք իմաստային տեսակետից բավական բազմազան են և կդայի ընդհանրություններ ունեն մյուս ընույթի որոշ երկրորդական նախադասությունների հետ։

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ա. Շ. — Աղավնի, Շիրակ, Երևան, 1954 թ.
2. Գ. Բ. — Գևորգ Բաշինջաղյան, Ճանապարհորդական նոթեր... Երևան, 1957 թ.
3. Դ. Դ. — Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատ. 6, Երևան, 1958 թ.
4. ԽԴԽ — Խաչիկ Դաշտենց, Խոդեդան, Երևան, 1956 թ.
5. Հ. Թ. — Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հատ. 2, 3-րդ, Երևան։
6. ՀԺԲ — Հայ ժողովրդական բանահյուսություն, Երևան, 1951 թ.
7. Ղ. Ա. — Ղազարոս Աղայան, Ընտիր երկեր, Երևան, 1957 թ.
8. ՄԴՄ — Մուրացան, Գևորգ Մարզպետունի, Երևան, 1957 թ.
9. Մ. — Մուրացան, Երկերի ժողովածու, հատ. 4—5-րդ, Երևան, 1953 թ.
10. Ն. Դ. — Նար-Դոս, Երկերի ժողովածու, հատ. 3, Երևան, 1955 թ.
11. Շ. — Ալ. Շիրվանզադե, Երկերի ժողովածու, հատ. 2, Երևան, 1958 թ.
12. ՍԽՀ — Սերո Խանզադյան, Հողը, Երևան, 1957 թ.
13. ՍՍՄ — Սերոբ Սարգսյան, Մոկաց Միրզա, Երևան, 1956 թ.
14. Ս. Զ. — Ստ. Զորյան, Հուշերի գիրք, Երևան, 1959 թ.
15. Բաֆ. — Բաֆֆի, Երկերի ժողովածու, հատ. 2, 8, Երևան, 1955 թ.
16. Վ. Ա. — Վախտանգ Անանյան, Որսորդական պատմվածքներ, չորրորդ պր., Երևան, 1958 թ.